№ 50 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 1 **1897** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 1 № 50

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԵԼԵՖՈՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
ՏԵԼԵՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Շ Ա Բ Ո Ւ Ն Ա Կ վ Ո Ւ Մ Է

„ՄՇԱԿ"

(25-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1897 ԹԻԱԿԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տարեկան գինը՝ 10 ռուբլի, կէս տարվանը՝ 6 ռուբլի

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction «MSCHAK»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի նոր գիրք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գաղթականների օգտին. Նամակ Կիէվից. Նամակ Վաղարշապատից. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Պատերազմի դաշտից. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ստեփան մեծի մայրը.

ՄԻ ՆՈՐ ԳԻՐՔ

—

Նորերս Լօնդօնում լոյս տեսաւ «The Outgoing Turk» վերնագրով մի գիրք, աշխատութիւն Թօմսօնի: Գրքի առարկան Թիւրքն է և Թիւրքաց կառավարութիւնը: Հեղինակը տարբերութիւն է դնում Թիւրք տարրի և Թիւրք կառավարութեան մէջ և կարծում է, որ Թիւրք ժողովուրդը կանոնաւոր եւրօպական իշխանութեան ներքոյ՝ կարող է կորցնել իր վատ յատկութիւնները և դառնալ խաղաղ աղգաբնակութիւն: Ինչ վերաբերում է Թիւրք կառավարութեան՝ նա չէ հաւատում, որ այդ կառավարութիւնը կարող լինի բարեփոխվել և «Երիտասարդ Թիւրքիայի» կուսակցութեան լաւատես հայեացքները համարում է հեւանք անփորձութեան և պարզամտութեան:

Արանից քսան տարի առաջ, այն է 1877 թվի յունվարին, Հօբարտ փաշան՝ փաստաբան հանդիսանալով վերածնվող Թիւրքիայի համար՝ գրեց Անգլիայի աղդեցիկ քաղաքական գործոնէներից մէկին մի նամակ, որով յայտարարում էր Թիւրքիայի վերանորոգութեան արշալոյսը: «Մենք, ասում էր նա իր նամակի մէջ, մինչև այժմ յարմար պայմաններ չունէինք արդար գործավարութեան համար: Այժմ, երբ Երիտասարդ, ինտելիգենտ և առաջադէմ մի իշխող ունենք, մենք ոտք ենք դնում ուղիղ ճանապարհի վրա: Մեզ միայն մի տարի ժամանակ տուէք և տեսէք թէ ինչ բարեփոխութիւններ ենք մտցնում մեր կեանքի մէջ, իսկ եթէ այդ չի լինի, այն ժամանակ մեզ կարող էք արտաքսել աղգերի քարտէզից»:

Ոչ թէ մի տարի, այլ ամբողջ քսան տարի անցաւ այն օրից, ասում է Թօմսօն, Թիւրքիայի հողի ամեն մի անկիւն սարսափների տեսարան դարձաւ, «Երիտասարդ, ինտելիգենտ և առաջադէմ» վերանորոգիչը Մեծ Մարդասպանի անունը ստացաւ, իսկ Թիւրքը չը ջնջվեց քարտէզից:

Թէ ինչպէս արագ և հիմնովին փոխվում է երկրի և նրա մէջ ապրող աղգաբնակութեան դրութիւնը, երբ նրանք Թիւրքաց բռնակալութիւնից ազատվում են,—այդ ցոյց է տալիս նախկին Թիւրքական երկիրների ներկայ ծաղկած վիճակը: Հեղինակը իբր օրինակ վերցնում է Բօսնիան, որ այժմ Աւստրիայի հովանաւորութեան տակն է: Թիւրք-ռուսական պատերազմի ժամանակ 200,000 մարդ փախաւ Բօսնիայից և Հերցեգովինայից, որոնցից 90,000-ը ոչնչացան հիւանդութիւններից, զրկանքներից և սովից: Այժմ նախկին Բօսնիայի վիճակում գտնվում է Մակեդոնիան: Ներկայ Բօսնիան այլ ևս ողողված չէ աւազակային խմբերով, այլ ևս չէ ասպատակվում և անիշխանութեան ու կամայականութեան տակ չէ տանջվում: Այժմ այնտեղ այնքան ապահով է կեանքը, որքան Լօնդօնի Հայդպարկ հրապարակում: Բօսնիայումն էլ կան Թիւրքեր, բայց դրանք այլ ևս վնասակար չեն: Ճիշդ է, նրանք բացի Ֆրանց-Յովսէփ կայսրից յիշատակում են իրանց մաղթանքների մէջ և իրանց խալիֆ սուլթանին, սակայն շատ լաւ զգում են նոր կեանքի առաւելութիւնները: Այդ խալիֆը այսօր Թիւրքաց սուլթանն է, իսկ մինչև 1481 թվականը նա ապրում էր Եգիպտոսում: Սուլթան Սելիմ յափշտակեց խալիֆութիւնը և դրանով կենտրոնացրեց օսմանեան ցեղի ձեռքում քաղաքական և կրօնական իշխանութիւնները:

Այդ է պատճառը, որ Թիւրքը կորցնելով սուլթանի հպատակութիւնը, չէ կորցնում իր կապը նրա հետ, նա չարունակում է նրան ճանաչել իբրև հոգևոր պետ: Սակայն այդ բանը կարևոր արժէք չունի. Հնդկաստանի աղգաբնակութեան մի խոշոր մասը նոյնպէս ճանաչում է խալիֆին և սակայն դրանով ոչ մի վնաս չէ հասցնվում ոչ բրիտանական գերիշխանութեան և ոչ տեղական զարգացման: Թող Թիւրքերի կրօնական պետը չարունակի լինել մահմետական ժողովրդի հոգեվարչութեան և մաղթանքների առարկայ. դրանից ոչ մի վնաս չը կայ: Բայց նա չը պէտք է ղեկավարող ու նախաձեռնող լինի և քաղաքական կեանքում: Այդտեղ ոչ միայն վնասվում են քրիստոնեաների և օտարների, այլ նոյն իսկ Թիւրք տարրի շահերը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Յոգուտ Թիւրքահայ գաղթականների, կովկասեան կառավարչապետին հասցնելու համար, մինչև ապրիլի 10-ը ստացանք հետևեալ նուէրները.

1) Մ ո ս կ վ ա յ ի ց, Լեոն Սարգսեանից, մի խումբ տիկինների և պարոնների շրջանում հանգանակած 396 ռուբլի: Նուիրատուներն են.

Տ. Եղիս. Սարգսեանց 10 ռ., Կ. Կուսիկեան 10 ռ., Լ. Սարգ. 10 ռ., Ն. Սարգսեանց 10 ռ., Մ. Ռոստոմեանց 5 ռ., տ. Նունէ Կուսիկեան 15 ռ., Գ. Ք. 50 ռ., Վ. Ք. 25 ռ., տ. Փ. Ոսկանեանց 20 ռ., տ. Ե. Հ. 3 ռ., տ. Ոմն 20 ռ., Թէոս 20

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆ ՄԵԾԻ ՄԱՅՐը

Զրոյց

Կարմեն Սիլվայի

—

Մօլդավիայի արևմտեան մասում, Պիէտրօ և Ֆօլտիշենէ քաղաքների մէջտեղ, գետակի մօտ դտնվող լեռան վրա ցիր ու ցան ընկած են Նիանց հին ամրոցի աւերակները:

Աւաղ, այդ հին ամրոցից այժմ չատ ոնչչան հետքեր են մնացել, լեռան ստորոտի վրա բուսած փոքրիկ քաղաքը համարեա ամբողջապէս կառուցված է նախկին զառող ամրոցի քարերից:

Հինաւուրց ժամանակներում այդ ամրոցը հրաչակ ունէր թէ մօտ և թէ հեռու տեղերում և անմատչելի էր համարվում: Այն ժամանակները նրա մէջ բնակվում էր Մօլդավիայի զօրեղ իշխանը, Ստեփանը, որը յիսունից աւելի յաղթութիւն էր տարել պատերազմներում, որոնցից համարեա միչա վերադառնում էր վէրքի նշաններով: Եւ իր իւրաքանչիւր յաղթութիւնից յետոյ նա կառուցանում էր մի-մի եկեղեցի, դրանով կամենալով իր հնորհակալութիւնը յայտնել երկնքին:

Մի անգամ նոր և տաք կռիւ սկսվեց: Ամրոցի բարձր պատերից չատ լաւ կարելի էր դիտել պատերազմի ընթացքը: Ահա արդէն կռիւը ըսկսել է անբարեյաջող ընթացք ստանալ Ստեփանի զօրքերի համար և բաղդը, ըստ երևոյթին, դիտաւորութիւն ունէր երեսը դարձնել մօլդավական իշխանից:

Ամրոցի մէջ մնացել էին միայն երկու կին՝ մէկը իշխան Ստեփանի կինն էր, իսկ միւսը մայրը: Երիտասարդ իշխանուհու ամբողջ դէմքը, նրա վարդագոյն այտերը, շրջափակված խարտեաշ մազերով, թրջված էին արտասուքներով. նա երբեմն ուղղում էր իր հայեացքը դէպի հորիզոնը, երբեմն էլ, սարսափահար, ծածկում էր քողով իր դէմքը՝ այլ ևս ոչինչ չը տեսնելու համար:

Միւս կինը բոլորովին այլ կերպ էր պահում իրան: Գոռով հայեացքով, նա կանգնած էր ջահիլ իշխանուհու կողքին և լուռ ու անշարժ նայում էր դէպի հեռուն, միչտ դէպի մի և նոյն կէտը: Ժամանակ առ ժամանակ նա դնում էր գեղեցիկ ձեռքը իր հարսի ուսի վրա և արտասանում էր մի քանի խօսքեր, կամենալով արիութիւն պահպանել ջահիլ կնոջ մէջ: Նրա ձայնը հնչում էր բարձր և պարզ, բայց մօրը չէր աջողվում մխիթարել յուսահատ կնոջը:

Հասաւ վերջապէս այն սարսափելի րոպէն, երբ կռիւը ամենաանմխիթար ընթացք ընդունեց, այնպէս որ երկիղը յաղթեց բոլոր միւս զգացմունքներին: Թշնամի բանակները յաճախ ընդհարվում էին միմեանց և շուտով իշխան Ստեփանը ստիպված էր պաշտպանողական դիրք բռնել:

—Ո՛հ, մայրիկ, մայրիկ,—նրանք կը սպանեն նրան:

—Դեռ երեկոն չը հասած, Ստեփանը յաղթող կը վերադառնայ:

Այն վստահութիւնը և անդրդուելի համոզմունքը, որով արտասանվեցին այդ խօսքերը, դադարեցրին ջահիլ իշխանի աչքերից հոսող արտասուքները:

Յանկարծ լսվեցին սրարշաւ ձիու չտապ քայլերի ձայնը և զօրեղ հարուածներ ամրոցի դռների վրա:

—Դա Ստեփանն է, ես համոզված եմ. վազեմ ներս թողնելու նրան:

Ձեռքի հրամայական նշանը յետ կանգնեցրեց ջահիլ կնոջը: Ապա մայրը դանդաղ քայլերով իջաւ սանդուղքից:

—Ո՞վ է բաղխում դուռը,—հարցրեց նա, կանգնելով դռների եաև, բայց չը բանալով նրան:

—Ստեփանը, քո որդին:

—Ի՞մ որդին... Անծանօթ, ո՞վ ես դու, որ յանդգնեցիր այդ կերպ մտնել իմ քաջարի որդու բնակարանը:

—Մայր իմ, ներս թող ինձ: Ես եմ, քո որդին: Ես ջարդված եմ: Թիւրքերը քայլ առ քայլ հետամուտ են ինձ: Արիւնը հոսում է իմ այրվող վէրքերից...

—Ոչ, իմ որդին այդ կերպ չէր կարող խօսել: Դու ինձ համար անծանօթ ես: Իմ որդին միայն յաղթող կարող է վերադառնալ այստեղ: Իմ որդին հեռու է, չատ հեռու այստեղից. նա յաղթական ձեռքով հարուածներ է թափում իր հայրենիքի թշնամիների վրա: Իսկ դու, անծանօթ պատանի, որ դառն կսկիծով տանջում ես իմ հոգին՝ հաւատացնելով, որ իբր թէ իմ որդին ես դու,—իմացիր՝ ես քեզ ներս չեմ թողնի ամրոցը, քանի որ դու չը կարողացար յաղթող գալ այստեղ: Գնա և մահ գտիր պատերազմի դաշտում, այն ժամանակ միայն ես քո մայրը կը լինեմ և արտասուքով կը ցողեմ քո դերեզմանը:

Երիտասարդ իշխանուհին ծնկաչոք ընկաւ մօր առաջ, և փորձեց արտասուքներով և աղերսանքով կակղեցնել նրա սիրտը: Սակայն նա իր ձեռքի վճռական թափով հրամայեց նրան լռել:

Իշխան Ստեփանը գլուխը կախ դցեց՝ ամօթի և վշտի ծանրութեան տակ: Բայց նա շուտով սթափվեց, յետ քաշեց ճակատից իր խիտ գանգուրները, ձեռքն առաւ փողը և այնպէս սաստիկ փչեց, որ նրա կոչի ձայները կարող էին գիշերային մթութեան մէջ յարութիւն տալ մեռեալներին և ստիպել նրանց հետևել իրան՝ դէպի պատերազմի դաշտը:

Մօլդավական ցիր ու ցան զօրքը կրկին հաւաքվեց իր առաջնորդի շուրջը և կանոնաւոր զօրագնդեր կազմեց. նրանցով շրջապատված իշխանը քամու արագութեամբ իջաւ սարից և ուղղակի յարձակվեց իրան չը սպասող թշնամիների վրա, որոնք կարծելով թէ յաղթութիւնը իրանց է պատկանում, արդէն հանգիստ էին առնում: Սակայն չատ երկար ժամանակ պահանջվեց՝ թշնամուն ցիր ու ցան անելու համար:

Կռւի աղմուկը այժմ աւելի և աւելի էր հեռանում: Քամին բերում էր ամրոցը՝ այնտեղ սպասող երկու կանանց՝ յաղթութեան աղաղակները, որոնցից ուժգին բաբախում էին նրանց սրտերը:

Եւ ահա իշխան Ստեփանը կրկին մօտեցրեց փողը իր շրթունքներին և այս անգամ դուրս թռան նրանից զուարթ և ուրախ ձայներ: Յաղթողները յետ դառնալով՝ իրանց քայլերը ուղղեցին այժմ դէպի ամրոցը, որի պարսպի բարձրութիւնները կորչում էին աստղաղարդ հորիզոնում: Իսկոյն և եթ ամրոցի ներսում ամեն տեղ բաղմաթիւ ճրագներ փայլեցին. այնտեղ չտապով պատրաստութիւն էին տեսնում յաղթողներին հանդիսաւոր կերպով ընդունելու համար:

Ահա բլուրի ստորոտի մօտ լսվեց ձիու ոտնաձայն: Իշխան Ստեփանը պանում էր՝ իր զօրքի գլուխն անցած: Հեռուից տեսնելով իր մօրը, նա ցած թռաւ ձիուց և ծունկ չոքեց նրա առաջ:

—Մայր իմ, ասաց նա, ձեզ եմ պարտական այս իմ յաղթութեամբ:

Այն ժամանակ միայն առաջին անգամ արտասուքներ երևացին արիասիրտ կնոջ աչքերում, և նրա շրթունքները դողացին: Նոյն այդ միջոցին արդէն հերոսը իր կրծքին էր սեղմում իր ջահիլ և երջանիկ կնոջը:

—Իսկ դու ինձ նեռս կը թողնէիր,—շշնջաց նա՝ կնոջ ականջին:

—Ես քեզ այնպէս սիրում եմ, Ստեփան, և այնպէս վախենում էի քեզ համար...

—Ինչ ուզում ես ասա,—բարձր ձայնով ընդհատեց նրան իշխանը,—բայց մօրս սէրը աւելի զօրեղ է քո սիրուց:

ր., Ստ. Թումանցից 10 ր., ոմն 2 ր., ոմն 2 ր., ոմն 3 ր., տ. ոմն 20 ր., տ. Լ. Աւետիսեան 20 ր., տ. Հ. Յակոբեանց 10 ր., Մկրտչեանց 5 ր., Աւետիս Թ. Մանուէլեանց 25 ր., տ. Փեփրոնէ Դուլղարեանց 10 ր., ոմն 5 ր., Գ. Խ. 10 ր., Յ. Սարգսեանց 25 ր., ոմն 50 ր., մի աչակերտ 1 ր.—գումարը 396 բուբլի։

2) Մեղրի գիւղից, գործակալ Վահան քահանայ Տէր-Գրիգորեանից 48 բուբլի, հանգանակած Շվանիձոր և Մալև գիւղերում։ Նուիրատուներն են.

Շվանիձորցիներ՝ Յովսէփ Յակոբեան 5 ր., Մահտեսի Անտոն Պարսամեան 3 ր., Շվանիձոր գիւղի ծխականներ 30 ր., և Մալև գիւղի ծխականներ 10 ր։ Գումարը 48 բուբլի։

3) Սիմֆերօպոլից, Սերովբէ Յարութիւնեան Պողաջեանից՝ 25 բուբլի։

4) Եալթայից, Յակոբ Տէր-Սարգսեանից, 60 բուբլի, հանգանակած աջակցութեամբ Յակոբ Խաչատրեանցի։ Նուիրատուներն են.

Յ. Տէր-Սարգսեան 3 ր., դերձակ Արամ 1 ր., Յ. Պողոսեան 1 ր., Գ. Կարապետեան 1 ր., Մ. Բաբերցի 50 կ., Յարութիւն և Ադամ 1 ր., Մ. Գրիգորեան 50 կ., Ն. Պողոսեան 50 կ., Ի. Խանիգարեան 1 ր., Գ. Իսակեան 1 ր., Կ. Յակոբեան 1 ր., Մ. Ասլատուրեան 1 ր., Ա. Յոհաննէսեան և Մ. Պետրոսեան 1 ր., Պ. Գրիգորեան 1 ր., Զ. Ասլանեան 50 կ., Ե. Մկրտիչեան 1 ր., Գ. Կարապետեան 50 կ., Ներսէս և Ստեփան 1 ր., Գ. Ստեփանեան 1 ր., Կարապետ և Մանուկ 1 ր., Սանդրո, Սարգիս և Տիգրան 1 ր., Գ. Վարդանեան 1 ր., Ս. Աղրոեան 1 ր., Ա. Աղրոեան 1 ր., Գրիգոր և Յովսէփ 1 ր., յոյն Ստաղեա 1 ր., Հ. Խաչատրեան 2 ր., Վ. Ադամեան 1 ր., Ս. Գասպարեան 1 ր., Բենիամին և Խաչատուր 1 ր., Ի. Եղիազարեան 1 ր., Բացիք և Վարդեվան 1 ր., Յ. Եղիազարեան 1 ր., Եօյրիգա և Յովհաննէս 1 ր., Պ. Կիւրեղեան 1 ր., Յ. Խաչատրեան 1 ր., Յարութիւն և Մկրտիչ 1 ր., Թ. Ստեփանեան 1 ր., Գ. Յակոբեան 3 ր., Յ. Զաքարեան 1 ր., Սարգիս և Սեդրակ 1 ր. 40 կ., Յ. Դէորգեան 1 ր., Յ. Մանուկեան և Պետոն 1 ր., Ս. Խաչատուրեան 1 ր., Էմիր Հիւսէին և Ստեփան 1 ր., Ա. Տիգրանեան 1 ր., Յովհաննէս, և Արիստակէս 1 ր., Եղիա Ավռամիչ 1 ր., Մ. Առաքելեան 1 ր., Մ. Մելիք-Դաւթեան 1 ր., յոյն Լազարեթի 50 կ., Խ. Ղարիպով 1 ր., Յ. Խանիգարեան 1 ր։ Մի քանի անձինք 4 ր., և փոքրիկ Թ. Տէր-Սարգիսեան 60 կօպէկ։ Գումարը—60 բուբլի։

5) Ախալցխայից, Կարապետ քահանայ Մալխասեանից 20 ր. 25 կօպէկ, հանգանակած այդ գիւղի ժողովրդի մէջ, աջակցութեամբ երէցփոխ Սիմէօն Մէարեղեանի և տանուտէր Զաքար Մղէպրեանի։ Դրա հետ միասին նոյն անձինք ուղարկել էին գիւղում հաւաքած 37 կոտոր հին չոր և 5 արշին չիթ, որը յանձնվեց հայոց Բարեգործական ընկերութեան (չորեր նուիրողների անունները չենք տպագրում)։ Նուիրատուներն են.

Մ. Խոցոյեան 1 ր., Ս. Կ. Մէարաղեան 15 կ., Ա. Ստեփանեան 20 կ., Ս. Յովսէփեան 20 կ., Դ. Գաթէնեան 15 կ., Գ. Սիրունեան 20 կ., Գ. Ամիրաղեան 20 կ., Ա. Մէարաղեան 20 կ., Ե. Մզարէուլեան 50 կ., Ա. Տէրտէրեան 50 կ., Ս. Տէրտէրեան 50 կ., Ա. Ամիրումեան 20 կ., Ս. Սիրունեան 20 կ., Ղ. Փրիդոնեան 20 կ., Ս. Ն. Մէարաղեան 20 կ., Զ. Մղէպրեան 20 կ., Ա. Յովսէփեան 50 կ., Ե. Գաթէնեան 20 կ., Ս. Ստեփանեան 10 կ., Պ. Գրիգորեան 20 կ., Մ. Ամիրումեան 20 կ., Ա. Զանեան 40 կ., Ս. Ստեփանեան 20 կ., Վ. Մզարէուլեան 40 կ., Վ. Մէարաղեան 15 կ., Գ. Ստեփանեան 20 կ., Մ. Կակինեան 15 կ., Մ. Մզարէուլեան 1 ր., Յ. Կակինեան 25 կ., Դ. Հովսեան 10 կ., Կ. քահ. Մալխասեան 50 կ., Հեղինէ Մալխասեան 50 կ., Կատարինէ Ստեփանեան 50 կ., Կէկէլ Ամիրաղեան 10 կ., Շուշան Տէրտէրեան 20 կ., Աննա Մէարաղեան 10 կ., Գայիանէ Տէրտէրեան 60 կ., Սօֆիա Տէրտէրեան 25 կ., Бродзели (բժիշկ пріемный покой-ի) 2 ր., Կատարինէ Մզարէուլեան 50 կ., Կէկէլ Մզարէուլեան 50 կ., Կատարինէ Մզարէուլեան 1 ր., Նատալիա Մըղէպրեան 35 կ., Գ. Տէրտէրեան 1 ր., Եղիսաբէթ Յովսէփեան 50 կ., Կ. Մղէպրեան 20 կ., Սալոմէ Դուրկլեան 40 կ., Նատօ Դուրկլեան 20 կ., Վառվառէ Մէարաղեան 20 կ., Սօֆիա Դուրկլեան 50 կ., Մարթա Մղէպրեան 20 կ., Զ. Յովսէփեան 40 կ., Գայիանէ Լոմոյեան 10 կ., Կ. Մզարէուլեան 1 ր։ Գումարը 21 ր. 25 կ. (1 բուբլի գիւղում տրված է մի դաղթականի)։

Այսօր այդ 549 ր. 25 կ. ուղարկեցինք Թիֆլիսի ոստիկանապետին, կառավարչապետին հասցնելու համար։

Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 6393 ր. 92 կ. 105 ֆրանկ 10 մարկ 5 լիրա։

ՆԱՄԱԿ ԿԻԵՎԻՑ

Ապրիլի 10-ին

Բարձրագոյն դպրոցների կարիքը Ռուսաստանի համար օրէցօր դառնում է հերթական հարցերից մէկը։ Մանաւանդ մեծ կարիք է զգացվում մասնագիտական ճեմարանների, որովհետև պետութեան ընդարձակ տարածութեան վրա երկրի բնական հարստութիւնների մշակելը քանի գնում աւելի և աւելի զարգանում է, իսկ այդ հարստութիւնները աւելի օգտակար արդիւնաբերելու համար անհրաժեշտ են լաւ մասնագէտներ։ Մասնագիտական բարձրագոյն դպրոցների կարիքը աւելի զօրեղ կերպով զգալի է դարձել ընդհանրապէս Ռուսաստանի հարաւային նահանգներում, դ ի թիւս որոց և Կիեվի նահանգում, որտեղ կան չաքարի ահագին գործարաններ և գիւղատնտեսական ու անասնապահական մեծ անտեսութիւններ։

Պէտք է ասել, որ Կիեվը մինչև քաղաքներից աւելի բաղդաւոր էր այդ հարցում,—որովհետև կարճ միջոցում խնդիրը արծարծվեց և համարեա թէ վերջնական լուծումն է ստացել։ Բարձրագոյն հրամանով թոյլատրված է Կիեվում բանալ պոլիտեխնիկում. և ուշադրութեան արժանի է, որ այդ պոլիտեխնիկումը բացվելու է զուտ մասնաւոր նպաստներով։ Բացված հանգանակութիւնը կարճ միջոցում տուեց 860 հազար բուբլի և անկասկած է, որ այդ գումարը շուտով կը հասնի մի միլիոնի։ Հանգանակութեան այդպիսի աջողութիւնն արդէն լաւ ապացոյց է, թէ որքան հասուն էր հարցը և որչափ արդիւնաբերողները զգացել են մասնագիտական հիմնարկութեան բացակայութեան վնասը մի այնպիսի արդիւնաբերող շրջանում, որպիսին է Ռուսաստանի հարաւ-արևմտեան մասը։ Քաղաքը յատկացրել է 300 հազար և մասնաւոր նուիրատուութիւնների մէջ աչքի ընկնող մասնակցութիւն ցոյց տուեց յայտնի հարուստ և բարեգործ՝ Նիկոլա Տերեշչենկո, որը խոստացել է 150 հազար բուբլի և արդէն իսկ 100 հազարը դրել է յանձնաժողովի տրամադրութեան տակ։ Կիեվի ապագայ պոլիտեխնիկումը պէտք է համապատասխանէ գիտութեան «վերջին խօսքին», թէ արտաքին և թէ ներքին պայմաններով։ Ռուսական մասում յայտնի և մեծ տեղ է տրվելու «պրակտիկային» և որովհետև փորձը ցոյց է տուել, թէ որքան վնասակար է ծանրացնել ուսանողի գլուխը անպէտք, չոր թէօրիաներով, և այդպիսին աւարտելով անշուշտ լաւ մասնագէտ չէ դառնում, քանի որ նրա անգին ժամանակը խլված էր ոչ թէ ձեռք բերած գիտութիւնը զուգընթացաբար փորձնականի վերածելով, այլ միմիայն գրքի տառերի և ֆորմուլաների գլխին նստելով։ Ճեմարանը լինելու է ֆինանսական մինիստրութեան ղեկավարութեան տակ. այս հանգամանքն էլ բաւական նպաստաւոր է պոլիտեխնիկումի աջողութեանը։

Պոլիտեխնիկումի բացվելով, Կիեվը կունենայ երկու բարձրագոյն դպրոց, ուրեմն ուսանողութեան թիւն էլ կը շատանայ, ի թիւս որոց, երևի, և հայ ուսանողութեան։ Մասնաւորելով խօսքս, ես խորհուրդ կը տայի ապագայ հայ ուսանողներին աչքի առաջ ունենալ Կիեվը, որովհետև քաղաքի կեանքի պայմանները մեծ յարմարութիւն են ներկայացնում մեր չքաւոր ուսանողութեան համար։ Կլիմայի մասին խօսելն իսկ աւելորդ է, որովհետև նա շատ նման է Կովկասեան կլիմային։ Շատերը ձգտում են մայրաքաղաքները, բայց որքան չնչին տոկոսն է մնում առողջ կամ այն դրութեամբ, ինչպէս նա հեռացել է հայրենիքից, իսկ մեծ մասը աւարտելով հայրենիք է վերադառնում ոչ թէ թարմ, այլ դեղնած, նիհար և շատ անգամ ընդմիշտ հիւանդ, մայրաքաղաքներում սաստիկ տարածված ներքին հիւանդութեամբ, սիֆիլիսով և այլն։

Նուսէ

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Ապրիլի 22-ին

Ձիւնը վաղուց հալվել է և եղանակը տաքացել։ Շարունակ գարնանային անձրևներ են գալիս և այդ պատճառով գարնանային ցանքերը շատ անաջող անցան մեր գաւառում։ Աշնան ցանքերը ժամանակից ուշ ցանելու և ձմեռվայ ցրտերի պատճառով լաւ յոյսեր չեն խոստանում, առաւել ևս ցորենը, որ ՀԼասված է երեւում և բերքը շատ պակաս։

Վեհարանի նախաձեռնութեամբ չինվող շերամապահական կայարանը, անտառի մէջ, արդէն աւարտված է և շուտով կը սկսվի սերմի զարթացնելը և որթերի կերակրելը։ Լսում ենք, որ Վեհափառի կարգադրութեամբ թոյլ է տրված ամեն մի ցանկացող գիւղացու մտնել կայարանը և սովորել շերամապահութիւն, որպէս զի այս գործը կարելի լինի տարածել գիւղացիների մէջ։ Ցանկանալով աջողութիւն, յոյս ունենք, որ մեր գիւղացին այս առիթը ձեռքից չի թողնի և կաշխատի ծանօթանալ շերամապահութեանը այդ կայարանում։

Ա. Օ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Ապրիլի 26-ին

Անընդհատ և անժամանակ տեղացող ձիւն և անձրևները անտանելի են դարձրել տեղական հողագործների դրութիւնը։ Զը նայած, որ արդէն մայիսը մօտենում է, և հարևան գաւառներում դալու և ցորենի արտերը թեղչվի բարձրութիւն ունեն, մեզանում դեռ ևս մի բուռ հացահատիկ չեն ցանել, իսկ այնցան, բացի միակ «տարեկանից», ոչ մի հացաբոյս չը կայ այստեղ։ Շատերը հաստատում են, որ մայիսի ցանքը սարահարթերում ցրտահարվում—փչանում է, իր ժամանակին չը հասունանալու պատճառով։ Այդ հանգամանքը աչքի առաջ ունենալով՝ կարելի է նախատեսել նաև այս տարվայ հողագործական անարգասաւորութիւն։ Խղճուկ հողագործ դասակարգը այս չորրորդ տարին է, որ ցանում է և ոչինչ արդիւնք չէ ստանում։

Մեր քաղաքում դժգոհութիւն է տիրում տեղական գործակալի դէմ. հասարակութեան մեծամասնութիւնը, գլխաւորապէս մեր ինտելիգենցիան մեծ զայրոյթ է յայտնում դէպի այդ վարդապետը՝ նրա գործած զեղծումների առիթով։ Ասում են, որ նա ծառայում է միմիայն իր գրպանին։ Զարմանալի է, որ Էջմիածնի կողմից ուղարկված այդ «բարեկարգիչները», փոխանակ ժողովրդի ցաւերը բուժելու, սկսում են կեղեքել նրան, դեռ մի կողմ թողած տգէտ տիրացուների առաջ քաշելը դէպի քահանայութիւն։ Դժգոհութիւնը նկատելի է ոչ պակաս չափով նաև գաւառում։ Այդպիսի անընդունակները լաւ կանեն, որ մնան վանքերի պարիսպների մէջ և ժողովրդի աչքից հեռու ուտեն պատրաստի հացը և ոչ թէ գնան գաւառները և այնտեղ «հասարակական գործիչի» դիմակի տակ ժողովրդին խաղալիք դարձնեն իրանց ձեռքում։ Սակայն աւելի ցաւալին այն է, որ դեռ գտնվում են մարդիկ, որոնք աչխատում են վարագուրել այդպիսիների ապօրինի գործողութիւնները...

Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 24-ին

Կարդալով «Մշակի» 17-րդ համարում Կաղզուանից ուղարկած թղթակցութիւնը Մ. Ղազարեանց ստորագրութեամբ, որ լի է զրպարտութիւններով բժ. Կաճկաճեանի դէմ, իբրև Բարեգործական ընկերութեան Կաղզուանի ճիւղի վարչութեան նախագահի, մենք, որ տարիների ընթացքում վկայ ենք եղել պ. Կաճկաճեանի գործունէութեան, իբրև նախագահի, եղել ենք նաև նրա հետ միասին վարչութեան անդամներ, սեպուհ պարտականութիւն ենք համարում այս երկտողով բողոքել պ. Մ. Ղազարեանի զրպարտութիւնների դէմ։ Եթէ պ. Կաճկաճեան շատ բան արել է մենակ, այդ եղել է վարչութեան գիտութեամբ և վարչութիւնը յանձնարարել է անել, լիովին հաւատ ընծայելով իր նախագահին և այդ վստահութիւնը նա միշտ արդարացրել է։ Իբրև ապացոյց պ. Մ. Ղազարեանի զրպարտութիւնների, բաւական է այսքանն ասել, որ պարանը գրում է թէ՝ «բժ. Կաճկաճեան ամեն տարի գանձն իր մօտ է պահել, չը նայելով որ միշտ եղել է ընտրված գանձապահ»։ Սա կատարեալ սուտ է։ Մենք եղել ենք գանձապահ 1891 և 1893 թ. և գանձը մեզ մօտ է եղել։ Սրանով թող դատեն և միւս գրածների ճշդութեան մասին։ Պ. Կաճկաճեան ինքը, ի հարկէ, կը պատասխանէ մանրամասնօրէն, իսկ մենք, պարտք համարեցինք երկտողով յայտնել մեր բողոքը, որը և խնդրում ենք տպագրել «Մշակի» մօտ համարներից մէկում։

Կօրիմաղ Օհանէզեանց
Վասիլ Հասան-Զալալեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասեան կառավարչապետի օգնական գեներալ Ֆրեղէ ապրիլի 29-ին ճանապարհ ընկաւ դէպի Հիւսիսային-Կովկաս՝ պաշտօնական գործերով։

—

Երեքշաբթի, ապրիլի 29-ին, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան հերթական նիստում ընկերութեան նախագահ ընտրվեց կառավարչապետ իշխան Գոլիցին։ Ապա քննութեան ենթարկվեց Ա. Քալանթարի զեկուցումը կաթնատնտեսութեան մասին։ Ընդհանուր ժողովը ընդունեց զեկուցման եզրակացութիւնները և որոշեց. 1) խնդրել կառավարութիւնից՝ մտցնել Անդրկովկասում անասունների ժանտախտին վերաբերեալ օրէնքը, յարմարեցնելով նրան տեղական հանգամանքներին, իսկ սրանց քննութեան համար հրաւիրել անասնաբոյժների, գիւղատնտեսների և պաշտօնական անձանց ժողով Գիւղատնտեսական ընկերութեան մէջ. 2) հիմնել Անդրկովկասի համար չարժական կաթնագործարաններ՝ մասնագէտների հսկողութեան տակ. 3) Կովկասեան երկաթուղային գծերի վրա և Սև ծովի չոգենաւներում յարմարութիւններ տալ կաթնային արդիւնքների տեղափոխութեան համար. 4) բանալ կարճժամանակեայ կրեդիտ կաթնային արդիւնքների համար. 5) հիմնել ալպիական փորձնական կայարան Կովկասի համար. 6) օր առաջ բաց անել կաթնատնտեսական ինստիտուտ մասնագէտներ պատրաստելու նպատակով. 7) մանրամասն քննութեան ենթարկել այն հարցը, թէ ինչ կերպ պէտք է ապահովել Կովկասեան չահերը ցուցահանդէսներում և 8) նպաստել Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեանը՝ հրաւիրելու մի ագրոնոմ, հսկելու թէ կաթնատնտեսական և թէ ուրիշ գիւղատնտեսական ձեռնարկութիւնների վրա։

—

Լսում ենք, որ յունիսի սկիզբներին Աղէքսանդրօպոլի գաւառում տեղի կունենայ գութանների մի մրցահանդէս։ Հարկային տեսուչ Բաուէր և երկրագործական մեքենաներ վաճառող Աուգերման փորձերի համար այդ ժամանակն են յարմար դտել։

—

Մենք չողոքորթված ենք «Кавказъ»-ի մեծահոգութիւնից։ «Համեմատաբար լուրջ և վայելուչ լրագիր», ասում է պ. Վելիչկո «Մշակի» մասին՝ իր օրգանի ապրիլի 29-ի համարում։ Որպիսի մեծահոգութիւն։ «Համեմատաբար լուրջ և վայելուչ»,—բայց ում հետ համեմատած, թոյլ ենք տալիս մեզ հարցնել։ Եթէ այդ համեմատութիւնը «Մշակի» և զանազան ծախու, փողոցային լրագիրների մէջ է,—թող ներվի մեր անհամեստութիւնը,—այդ մենք համարում ենք կատարելապէս վիրաւորական։ Կամ գուցէ պ. Վելիչկոի կարծիքով «անհամեմատաելի լուրջ և վայելուչ» լրագիրը «Кавказъ» է. այն ժամանակ, նրան լիազօրութիւն ենք տալիս «Մշակը» համարել «կատարելապէս ոչ-լուրջ և անվայելուչ», որովհետև այդ երկուսի մէջ՝ լրջութեան և վայելչութեան տեսակէտից՝ ոչ մի համեմատութիւն չէ կարող լինել, ինչպէս որ համեմատութիւն չէ կարող լինել «Մշակի» և այն բոլոր լրագիրների մէջ, որոնց իդէալը՝ ազգերի մէջ ատելութիւն սերմանելն է, իսկ կուռքը՝ ինսինուացիան։

—

Մայիսի 15-ին Թիֆլիսում տեղի կունենայ արևելեան թռչունների ցուցահանդէս։

—

Կիրակի, ապրիլի 27-ին, Թիֆլիսի ժողովարանում տեղի ունեցաւ օր. Պապայեանի կոնցէրտը։ Ներկայ եղող հասարակութիւնը շատ լաւ ընդունելութիւն ցոյց տուեց չնորհալի երգչուհուն։ Երկրորդ բաժանմունքի սկզբում նրան մատուցին մի գեղեցիկ փունջ։ Բացի ծրագրում նշանակված կտորներից, նա երգեց մի քանի ուրիշ կտորներ «Տրավիատայից», «Cavaleria rusticana»-ից և այլն։ Լսում ենք, որ օր. Պապայեան մտադիր է շուտով մի ուրիշ կոնցէրտ տալ՝ բարեգործական նպատակով։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 25-ին Մեծ թատրոնում երգիչ-բարիտոն Եղիազարեանցի դեբիւտն էր։ Նա մեծ հմտութեամբ և աջողութեամբ երգեց «Աիդա» օպերայում Ամոնաս-

բո՛ի պարտիան։ Նրա զօրեղ, քաղցրանչիւն ձայնը՝ աւելի լիրիկական, քան թէ դրամատիկական՝ թէպէտ և չէ կարելի ասել, որ լիովին համապատասխանէր Ամօնասրո՛ի ընտրութեանը, այսու ամենայնիւ հասարակութիւնը շատ լաւ և գոհացուցիչ տպաւորութիւն դուրս բերեց։ Լինելով փորձված երգիչ՝ պ. Եղիազարեանցը մի և նոյն ժամանակ և լաւ խաղացող է։ Դրամատիկական դարձուածներով հարուստ իր դերը նա կատարեց գեղարուեստական ճաշակով։ Թիֆլիսի հասարակութիւնը ճանաչում է պ. Եղիազարեանցին դեռ 1892 թւից. այժմ՝ համեմատած անցեալ տարիների հետ՝ նա անպայման առաջադիմել է։»

—

ՍՈՒՐԱՄԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 27-ին կայացաւ հասարակական ժողով՝ աւանդատու ընտրելու համար։ Ժողովին նախագահող պրիստաւը դիմեց ժողովականներին՝ հրաւիրելով ընտրութիւն կատարել գիտակցաբար, ընտրելով այնպիսի մարդ, որը կարողանայ բարեխիղճ կերպով կատարել իր պարտականութիւնը։ Սակայն ընտրողների, մանաւանդ վրացիների սկզբունքը, տարաբաղդաբար, ազգայնական հարցն էր։ Հրէաները միացան հայերի հետ և աւանդատի թեկնածու առաջարկեցին Գրիգոր Գրձելեանին, իսկ նրա օգնական մի վրացու. սակայն վրացիները, կազմելով մեծամասնութիւն, չը համաձայնվեցան ընտրել հային ու առաջարկեցին ընտրել Նիկո Քիմերիձէին։ Ընտրութեան հետևանքը չը յայտարարած՝ պրիստաւը յայտնեց ժողովականներին, որ երկու կողմերի թեկնածուներին կառաջարկէ պ. նահանգապետի բարեհայեցողութեանը։ Հարկաւոր է չեչտել, որ վրացիների ընտրած աւանդատը, որ մի պանդոկապետ է, մի քանի տարի առաջ լինելով դարձեալ աւանդատ՝ մինչև օրս հաշիւ չէ ներկայացրել հասարակութեան։ Լսում ենք, որ այս ընտրութեան դէմ հայերը պատրաստվում են բողոքել։» Ափսոս որ մեր թղթակիցը ոչինչ չէ ասում հայ թեկնածուի յատկութիւնների մասին.—եթէ նա էլ առանձին արժանաւորութիւններ չունի, այն ժամանակ սուրամցիների դրութիւնը նախանձելի չէ կարելի համարել։

—

ՄԵՐՎԻՑ մեզ գրում են. «Երկար տատանվելուց յետոյ վերջապէս՝ Մերվում հանդանակութիւն եղաւ յօգուտ հայ գաղթականների և հաւաքվեց 300 բուբլուց քիչ աւելի, մի գումար, որ համեմատած այստեղի վաճառականների կարողութեան հետ, մի և նոյնն է թէ մի կաթիլ ջուր ծովի մէջ։ Սակայն ցաւալին այդ չէ, այլ այն, որ այդ նպատակով հաւաքված փողը, ինչպէս լսում ենք, կամենում են գործադրել ոչ թէ գաղթականների օգտին, այլ այստեղի եկեղեցին չքեղացնելու համար։ Եկեղեցին առանց այն էլ առ այժմ եօլա կը գնայ, եկեղեցին քաղցից չի մեռնի, նրա ծխականները ողորմութիւն չեն խնդրում փողոցներում, նա մահամերձ հիւանդ չէ, հեռաւոր էլ և կարօտ չէ շուտափոյթ օգնութեան, նրան կարելի է առ այժմ սպասել տալ. բայց խօ չէ՞ կարելի քաղցածին ասել՝ դեռ ես եօլա կը գնաս, խօ չէ կարելի ասել՝ այսօր հաց մի կեր, վաղը կուտես, կամ թէ՝ թող քո երեխաները հացի տեղ իրանց մատները կրծեն։ Պարոններ, ամեն բան իր ժամանակն ունի. օգնեցէք նրանց, որոնք իսկապէս կարօտ են օգնութեան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

«Standard» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից. «Թօքատ ուղարկած քննիչ յանձնաժողովի նախագահ Հասան Ֆէհմի փաշային հրամանագրված է, որ քննութեան արդիւնքը ամեն օր ծածկագիր հեռագրով հաղորդէ Եըլդըզ-Քիօսք, ուր մի յատուկ մանաժողով կարդում է այդ ծածկագրերը և տեղեկագրում սուլթանին»։

—

Կ. Պոլսից հեռագրում են Լօնդօնի «Standard» լրագրին. «Հայ Յոհան Էֆէնդիի սպանողների գործը (Յոհանը անգլիական նպաստամատոյց ֆօնդի գործակալն էր Սղերտում և ըսպանվեց տեղական Թիւրքերից), օսմանեան դատարանում քննվելով, մարդասպանները դատապարտվեցան մահուան՝ չը նայելով որ ոչ մի հիւպատոս ներկայ չէր դատարանում և դեսպանատների կողմից էլ որ և է ճնշում չէր (!!) գործ դրված այս մասին։ Սա առաջին դատավարական արդար վճիռն է, որ արձակվում է առանց արտաքին ճնշման և ապացուցանում է (?) որ Բ. Դուռը ուզում է լաւ յարաբերութեան մէջ մնալ պետութիւնների հետ և հետեել նրանց խորհուրդներին, նաև իր այժմեան յաղթութիւնների միջոցին»։

—

«Daily News» լրագրի թղթակիցը առիթ է ունեցել խօսել Անատոլիայից փախած գաղթականների հետ։ Սրանց ասելով, Փոքր-Ասիայի խորքերի քրիստոնեայ ժողովուրդը մեծ վրդովմունքի մէջ է, որովհետև Թիւրքերի մէջ յուզմունք է նկատվում և երկիւղ կայ նոր կոտորածների մասին։ Սև ծովի Թիւրքական ափերի նաւահանգիստներից շատ հայեր ուսաց նաւերով ուղևորվում են զանազան տեղեր։

—

Միացեալ-Նահանգների նոր նախագահ Մակ-Կինլէյ մտադիր է կառավարութեան դիրքը փոխել Արևելքի վերաբերութեամբ և ամերիկական հպատակների պաշտպանութեան գործը ամուր հիմքերի վրա դնել։ Ամերիկական մամուլը յոգնած և դժգոհ Կլիվլենդի աններելի թոյլ քաղաքականութիւնից, մեծ յոյս ունի, որ Մակ-Կինլէի օրով Ամերիկայի ձայնը լսելի կը լինի Թիւրքիայում և Ամերիկայի շահերին վնասողները կը պատժվեն։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏԻՑ

—

Մենք ապեցինք «Մշակի» մէջ մի քանի մասնաւոր հեռագիրներ Ֆարսալում և Վելեստինօում տեղի ունեցած ճակատամարտերի մասին։ Լրացնում ենք այդ տեղեկութիւնները նոր մանրամասնութիւններով։

Վիէննայից հեռագրում են. «Յունաց թագաժառանգը և Նիկոլայ իշխանը Ֆարսալի ընդհարումների ժամանակ կռւում էին գնդակների կարկուտի տակ և իրանց օրինակով քաջալերում էին զօրքը։ Լուրեր են պատում առաջիկայ զինադադարի մասին։ Գարիբալդին վերադառնում է Յունաստանից հայրենիք»։

Պարիզից հեռագրում են. «Թիւրքերի երեք յարձակումները Վելեստինոյի և մի յարձակումը Ֆարսալի վրա՝ երէկ յետ մղվեցին յոյների կողմից։ Յաղթութիւնը փառաւոր էր, չը նայելով որ Թիւրքաց Թնդանօթները իրանց թւով երկու անգամ աւելի էին, քան յոյներինը և բացի դրանից Թիւրքերը գործ էին դրել և հեծելազօրքը, մինչ յոյները հեծելազօրք չունէին։ Գահաժառանգը և Նիկոլայ իշխանը մեծ քաջութիւն ցոյց տուին այդ կռւում։ Այսօր սպասվում է Թիւրքերի նոր յարձակումը»։

Աթէնքից հեռագրում են. «Վելեստինօում տեղի ունեցած արիւնահեղ կռւից յետոյ, Սմօլէնից գնդապետը յաղթութիւն տարաւ՝ յետ մղելով Թիւրքերի բոլոր յարձակումները։ Թիւրքերը, նշանաւոր կորուստ կրելով, փախան դէպի Լարիսա։ Յոյները գրաւեցին Կարդիցան և Տրիկալան»։

Յունաստանում կազմակերպված է կամաւորների մի խումբ 2000 հոգուց բաղկացած։ Նրա հրամանատարն է գնդապետ Բօցարիս, իսկ առաջնորդողը մի երիտասարդ աղջիկ է—յունաց Ժաննա դ'Արկ։

Չը նայելով այդ յաղթութիւններին, Յունաստանը այնու ամենայնիւ ստիպված է յետ նահանջել։ Նահանջման պատճառները այժմ քիչ-քիչ պարզվում են. յունաց արտաքին գործերի մինիստր Սկուլիցիս յայտնել է, որ յունական կաբինէտը որոշ քաղաքականութիւն չունէր։ Իսկ Գէորգ թագաւորը, ընդունելով նոր կաբինէտի պարագլուխ Բալլիին, յայտնեց նրան, որ Դելիանիսի ցոյց տուած տեղեկութիւնները զէնքերի և առհասարակ պատերազմական մթերքների քանակութեան մասին, շատ չափազանցրած էին։ Միւս կողմից զլխաւոր շտաբի անընդունակութիւնը վերին աստիճանի վրդովեցուցիչ է։ Շտաբի կազմութեան մէջ մտնող անձանց անընդունակութիւնը երևում է նրանից, որ օրինակ, այդ շտաբի պետ Սպանդոնցակիս հրամայում է զօրքին յետ նահանջել Տուրնավօից երկաթուղով, առանց իմանալու, որ այստեղ երկաթուղի չը կայ։ Վերին աստիճանի թոյլ է և կարգապահութիւնը։ «Եթէ յայտնել է Բալլին, ապագայ պատերազմական գործողութիւնները չօգնեն վերականգնելու յոյների զինուորական պատիւը, մինիստրութիւնը չի վստահանայ խորհուրդ տալ երկրին չարունակել անմիտ պատերազմը։ Յունաստանը կը հրաժարվի Կրետէի միացումից, եթէ մեծ պետութիւնները երաշխաւորեն իսկական ինքնավարութիւնը և եթէ յունական սահմանները Թեսալիայում փոխվեն այնպէս, որ կարելի լինի նրանց լաւ պաշտպանել։»

—

Գերմանական լրագիրները ներբողներ են նվիրում գերմանացի Գրումբկօվ-փաշային այն հերոսութեան համար, որ նա ցոյց տուեց Թիւրք զօրքի շարքերում։ Նրանք պատմում են, որ երբ Թիւրքերը մօտեցան Լարիսային, ամենից առաջ գտնվում էր Գրումբկօվ-փաշա. նա նկատեց, որ Սալամբրիա գետի վրա շինած կամուրջի տակ յոյները ական են դրել, որ պիտի պայթէր էնց այն միջոցին, երբ Թիւրքերը ոտ կը դնէին կամուրջի վրա։ Գերմանացի փաշան Թիւրք զօրքերի աչքի առաջ հեռացրեց ականի հաղորդիչ լարերը և ապա զօրաբաժնի գլուխն անցած՝ առաջինը մտաւ Լարիսա։ Այս հերոսութեան մասին իսկոյն հեռագրվեց Վիլհելմ կայսրին, որը հիացաւ իր օֆիցէրի անձնազոհութեան և անվախութեան վրա։ Բայց և այդպէս, Վիլհելմ չը կարողացաւ պահել քաջ գերմանացուն Թիւրքաց բանակում։ Միջազգային օրէնքներին դէմ է, որ մի չէզոք պետութեան օֆիցէր, քանի որ գտնվում է այդ պետութեան իսկական ծառայութեան մէջ, մասնակցի պատերազմին։ Այդ իրաւազանցութիւնը բողոքների առիթ տուեց և Վիլհելմ հարկադրված եղաւ հրամայել իր գեներալին թողնել պատերազմի դաշտը և գնալ Կ. Պոլիս։

Վիլհելմ կայսրը մի ինքնագիր նամակով շնորհաւորեց Թիւրքաց սուլթանին՝ Թիւրք զօրքի յաղթութիւնների առիթով։

Ֆրանսիական լրագիրները, թարգման հանդիսանալով Պարիզի դիպլոմատիական շրջանների կարծիքներին, ուշադրութիւն են դարձնում այն հանգամանքի վրա, որ Թիւրքերը իրանց տարած յաղթութիւնների պատճառով դարձել են անձնապատան և մոռացել են իրանց չափը։ Այդ անձնապատանութիւնը կարող է զանազան անակնկալութիւններ պատճառել Եւրօպային և Ռուսաստանը հարկադրված կը լինի այդ պատճառով հանդէս բերել նեղուցների հարցը։—«Soleil» լրագիրը հաստատում է, որ այժմ Գերմանիան է Թիւրքիայի և Արևելքի տէրը և բոլորովին յետ է մղել Ֆրանսիացիներին, որոնք մի ժամանակ մեծ ազդեցութիւն ունէին Արևելքում։ Նոյն իսկ Բիսմարկի և Նապոլէօն III-ի ժամանակ Ֆրանսիական դիպլոմատիան այսպիսի մեծ պարտութիւն չէր կրած։

Կ. Պոլսից հեռագրում են «Frankfurt. Zeitung» լրագրին, որ ռուսաց դեսպանատան առաջին թարգման Մակսիմով մայիսի 1-ին (ն. տ.) գնաց պալատ, որպէս զի յայտնէ սուլթանին ռուսաց կառավարութեան երախտագիտութիւնը այն մարդասէր վարմունքի համար, որ Թիւրք զօրքերը ցոյց են տալիս իրանց գրաւած տեղերում յոյն գերիներին և բնակիչներին։

Կ. Պոլսի պատերազմական խորհուրդը, քննելով այն պայմանները, որոնցով կարելի է հաշտութիւն կայացնել, առաջարկեց սուլթանին պատերազմական տուգանքի փոխարէն պահանջել Յունաստանից՝ նրա նաւատորմը։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, ապրիլի 21-ին

Թուրքօ-հելլէնական պատերազմը սկսելէն վերջ կարծես տաճկական ոստանը կերպարանափոխ եղած է։ Մեծ յուզում կը տիրէ ամեն ազգութեանց բոլոր խաւերուն մէջ. ամեն ոք լարված ուշադրութեամբ կը հետամտի եղելութեանց և չափազանց հետաքրքիր է դիտնալու թէ ինչ է լինելու պատերազմին վախճանը։ Մերթ յոյնը կուրախանայ, մերթ տաճիկը. եւրոպացիք հանդիսատես են լոկ, իսկ հայը անձկութեամբ ներկայէն ապագայի մթութեան մէջ կը խորասուզէ իր հայեացքը լուսատու կէտեր փնտռելով հոն...

Թէ եւրոպական և թէ տեղական—մանաւանդ տաճկական—թերթերու մեծ ապառում կայ. քաղաքիս թուրք թերթերը ամեն օր կէսօրէն վերջ 1—2 յաւելուածներ հրապարակ կը հանեն՝ որոնք կը պարունակեն նոր ստացուած հեռագիրներ պատերազմի դաշտէն։ Կէսօրէն վերջ մինչև երեկոյ ամեն փողոցներու մէջ կը լսուին թուրք ցրուիչներու սուր ու խռպոտ ձայները, որոնք հնիհն կը վազեն փողոցներն ի վեր «յաւելուածներ» վաճառելու համար։ Եւ պէտք է դիտնալ որ տեղական թերթերը միշտ փայլուն, ուռուցիկ գոյներով կը նկարագրեն օսմանեան զօրաց յաջողութիւնները. ոչ մի տող իրենց անհպատաս։

Քաղաքի ոստիկանական հսկողութիւնը մեծապէս աւելացել է. միշտ փողոցները կը պըրտին թէ ձիաւոր և թէ հետակ պահապան-զինուորներ, որոնք մի քանի օրէ ի վեր զինուած են նոր ձևի բազմահարուածեան (Մաւզէրեան) հրացաններով. լրտեսներու վոնմակներ կը վրխտան չորս դին։ Բայց ձերբակալութիւնները դադրած են. ամեն ինչ հսկողութեան ներքև է։—Զատիկը առանց պատահարի անցաւ։

Պատերազմը սկսելէն մինչև հիմա մօտ 17,000 հելլէնահպատակ յոյներ մեկնեցան Յունաստան տեղւոյս կառավարութեան պնդումով.—այժմ ֆրանսական դեսպանատունը իր պաշտպանութեան տակ առած ըլլալով հելլէնահպատակները (միայն պանքիր, վաճառական և խանութպան եղողները)՝ արտաքսումը ընդհանրապէս դադրած է.—բայց ճկնորսները, նաւավարները, ջրհանկիրները, անգործները և այլն զուրկ ըլլալով այդ պաշտպանութենէն՝ ստիպված են թողնել տունտեղ ու գործ և տարագրվիլ։ Արտաքսվողները 40 տարեկանէն վար եղողներն են միայն։

Կը հաստատեն թէ սուլթանի սիրելին՝ Իզզէթ պէյը պալատի մէջ բանտարկված է.—անոր տապալուելուն պատճառը հետևեալն է կըսուի.—թուրքօ-յունական սահմանի վրա կռւող տաճիկ զօրաց հրամանատար Էֆէնդի-փաշան ժամանակ մը նեղը իյնալով հեռագրով կառավարութենէն օգնութիւն կը խնդրէ 40,000 զօրք և պաշար. բայց որովհետև պահանջված այդ ոյժը գոյութիւն չունէր հոս՝ Իզզէթը հեռագիրը ցոյց չի տար սուլթանին՝ անոր անհանգստութիւն չը պատճառելու համար։ Էֆէնդի փաշան կը երկրորդէ իր հեռագիրը, որը սակայն դարձեալ իր վեհապետին ձեռքը չի հասներ. բայց վերջ ի վերջոյ սուլթանը տեղեկանալով իրաց դրութեան մասին—կըսուի թէ ինք անձամբ հեռագրին գլուխը անցեր է—եղելութիւնը կը հասկընայ ու զայրանալով Իզզէթի յանդգնութեանը վրա՝ պաշտօնանկ կընէ զայն։ Սուլթանը իր դանձարանը բացած է պատերազմական ծախքերու առջև և հինգ միլիոն օսմանեան ոսկի յատկացուցած է, կըսուի։

Զինուորական հաստատութեանց համար 2 տարիէ ի վեր հաւաքուած ընդհանուր հանդանակութեան գումարն ալ յատկացուած է պատերազմական ծախքերու։

Դրամատէր յայտնի Ռնճեանը 200 ոսկւոյ արժողութեամբ պաքսիմատ (փուռի մէջ չորցուցած հաց) նուիրած է օսմանեան պատերազմող զօրաց և ուղարկած ռազմի դաշտը, իր խորին հպատակութիւնը գործով ցոյց տալու համար իր վեհապետին։

Մինչև հիմա Ցարսանէլ իջած են թրքական 3 տորմիլ 13 մարտանաւ բաղկացած, իւրաքանչիւրին ընկերացած մէկ-մէկ կամ աւելի թորփիլանու, բայց թէ ինչպիսի նաւեր—այդ միայն Աստուած գիտէ։ Ծովային նախարարութիւնը Ոսկեղջիւրի մէջ նորոգել կուտայ 6 հատ մարտանաւեր ևս։

Մինչև հիմա պատերազմի դաշտէն մօտ 4,000 վիրաւոր Թիւրք զինուորներ բերուեցան տեղս և դեռ ամեն կառախումբերով պիտի բերուին.—այդ հիւանդ վիրաւորները փոխադրած են Խակիւտարի զինուորական հիւանդանոցը։

Կը լսենք, որ գերման կառավարութեան հրահանգով պատերազմի վայրը Թիւրք բանակներուն մէջ գտնուող գերմանացի սպաները վերադարձած են տեղս.—թէ ինչ միտք ունի այդ անսովոր կարգադրութիւնը՝ չը գիտենք. քիչ անհաճոյալի կը թուի մեզ...

Որովհետև դիպլոմատիական մարմինները զբաղեցնող այժմ կրետա-յունական կռիւներ են միայն, հայկական հարցը առժամեայ հանգըստեան դատապարտված է. չի խօսուիր նոյն իսկ բարենորոգմանց ծրագրին վրա. կառավարութիւնն ալ այժմ զգալապէս թեթևցուցած է

հայերու հետապնդումը, հալածումը և ինկած է երիտասարդ Թուրքերու և յոյներու ետևէ։

Ակնէն, Թոգատէն և առհասարակ ամեն գաւառներէ որքեր կը Թափին քաղաք՝ ապաստանելով պատրիարքարան.—ըստ կարելւոյն հոգ կը տարուի այդ Թշուառներուն։

Գ. Արեգին

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ղ օ չ ա ն, ապրիլի 23-ին

Ղ.օչանը գտնվում է Պարսկաստանի Խորասան կոչված նահանգում։ Այստեղ տեղի ունեցաւ այն սոսկալի երկրաշարժը, որը գուցէ ընթերցողները յիշում են, և որից քաղաքը աւերակ դարձաւ։ Շատ ժամանակ չէ, ինչ հայի անունը լսվում է այս կողմերում։ Այժմ այստեղ գտնվում են 6—7 հայեր, որոնք պարապում են վաճառականութեամբ։ Վաճառականութեան նիւթը գլխաւորապէս սավան է (քիշմիշ)։ Այս փոքրաթիւ հայ վաճառականները միմեանց հետ վարվում են մեծ թշնամութեամբ, չեն խնայում մէկը միւսին, աշխատում են միմեանց վնաս տալ. եթէ իրանց վրէժը փողով չեն կարողանում լուծել տալ, այն ժամանակ սկսում են պարսիկների մօտ մէկը միւսին բամբասել, հայհոյել։ Հրաւիրում ենք այդ հայ վաճառականներին՝ հեռու մնալ իրանց այժմեան ընթացքից։

Փ—ը

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թիւրքական մի նոր աչքակապութիւն։ «Neue Freie Presse» լրագիրը հաղորդում է, որ Թիւրքաց «Malumat» չաբաթաթերթը, սուլթանի հովանաւորութեան տակ, դառնում է ամենօրեայ պատկերազարդ լրագիր, որ դուրս կը գայ թիւրքաց և արաբերէն լեզուով, աղատամիտ հրապարակախօս Թահր-բէյի խմբագրութեամբ։ Սա կը լինի առաջին լրագիրը առանց ցենզուրայի, մի և նոյն ժամանակ և Թիւրքիայում ազատ մտքի մտցնելու սկիզբը։

Մամուլի ազատութիւն սուլթանի հովանաւորութեան տակ... Վիէննայի հրէական հրապարակախօսութիւնը կատարելապէս սիրահարված է Բոսֆորի իշխողի վրա։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՏՈՒ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՑ

Կ. ՊՕԼԻՍ, 29 ապրիլի։ Էդհէմ-փաշան հաղորդում է. «Գնդապետ Էնվէր, ազդաբնակութիւնից ողջունվելով, մտաւ Վօլօ, յայտնեց, որ քաղաքը գտնվում է Թիւրքաց վարչութեան տակ, և երաշխաւորութիւն տուեց ազդաբնակութեան ապահովութեան համար։» Էդհէմ-փաշան պահանջում է անյապաղ Վօլօ ուղարկել մաքսատան պաշտօնեաներ։»

ՊԱՐԻԶ, 29 ապրիլի։ Այն համոզմունքն է տիրում, որ Թիւրքիայի և Յունաստանի մէջ խաղաղութեան դաշն կապելը մեծ դժուարութիւններ չի առաջացնի և շուտով կարող է տեղի ունենալ։ Պետութիւններն իրանց մէջ արդէն որոշեցին խաղաղութեան պայմանները։ Գերմանիայի տատանման պատճառն այն է, որ Յունաստանը պետութիւնների ներկայացուցիչներին ուղարկած չրջաբերականի մէջ չընդունեց ուղղակի և պաշտօնապէս Կրետէի ինքնավարութիւնը, ինչպէս նրանից պահանջում էին։ Յունաստանը դրանից յետոյ խոստումներ տուեց այդ մասին, և գերմանական դեսպան Պլէսէին հրամանագրված է եռանդով պաշտպանել պետութիւնների ջանքերը։

ԱԹԷՆՔ, 29 ապրիլի։ Հաւատացնում են, որ միջամտութեան վերաբերեալ յայտագրի ընդդիրը արդէն կազմված է։

Կ. ՊՕԼԻՍ, 29 ապրիլի։ Թիւրքաց երեք բատալիօններ թնդանօթներով յարձակում գործեցին յունական զօրաբաժնի վրա, որը բաղկացած էր կանոնաւոր զօրքերից և կամաւորներից, Կամարինայի բարձրութիւնների վրա, Պրէվեզէից դէպի հիւսիս, և գրաւ տալով գրաւեցին Կամարինա։ Յոյները յետ քաշվեցին դէպի եկեղեցին։ Եկեղեցուն գրաւ տալով գրաւեցին։ Յոյների կուրուստները մեծ են։ Յունական զօրքերը յետ քաշվեցին դէպի հովիտը մինչև ս. Գէորգի կամուրջը, ուր յուսահատ յարձակում սկսեցին, բայց յետ մղվեցին Թիւրքերի կողմից։ Յոյները փախուստ տուեցին։

ԼՕՆԴՕՆ, 29 ապրիլի։ Լօրդերի ժողով։ Կիմբէրլէյի հարցին Սալսբիւրի պատասխանելով յայտնում է, որ յունաց կառավարութիւնը պաշտօնապէս չէ դիմել պետութիւններին և միջամտութիւն չէ խնդրել, և մինիստրը չէ կարծում, որ յունաց դիտաւորութիւնը լինէր դա, բայց յունաց կառավարութեան անդամները ցանկութիւն յայտնեցին, որ միջամտութիւն լինի։ Նոյնպիսի անորոշ դրութիւն տիրում է և Կրետէի վերաբերմամբ։ Յունաստանը չէ խոստանում անյապաղ կամ վերջնականապէս դուրս բերել իր զօրքերը, բայց մինիստրը լսել է, թէպէտև բացառապէս պաշտօնական կերպով չէ հաստատված այդ, որ Յունաստանը պատրաստակամութիւն է յայտնում ապագայում, այն էլ ոչ շատ հեռու ապագայում, կանչել իր զօրքերը Կրետէից։ Այդ խոստումը, դժբաղդաբար, բոլոր պետութիւններին չէ գոհացնում։ Անգլիայի ներկայացուցիչներին հրամանագրված է միանալ միջամտութեան վերաբերեալ այն բոլոր գործողութիւններին, որոնք կարող են ընդունված լինել մնացած պետութիւնների կողմից։ Կառավարութեան հիմնական կէտն է՝ արիւնհեղութեան դադարեցումը և ցաւում է, որ Յունաստանը ձեռն աւելի մեծ նշանակութիւն է տալիս, քան թէ նա իրաւունք ունի դրա վրա։

ԱԹԷՆՔ, 29 ապրիլի։ Ապրիլի 28-ին «Ռուսաց չոգենաւային ընկերութեան «Թագուհի Օլգա» չոգենաւով Մոսկվայից հասան 12 գիւղացիներ և 5 բժիշկներ դեղերի 60 արկղներով։ Նրանց առաջարկված է գնալ Վոլօ։

Որովհետև Յունաստանը դրաւոր կերպով պարտաւորութիւն յանձն առաւ հեռացնել իր զօրքերը Կրետէից, այդ պատճառով ծովապետներին հրամանագրված է թոյլ տալ նաև նատել Վասսոսին 40 օֆիցէրներով և 400 զինուորներով։

ԼԱՐԻՍԱ, 29 ապրիլի։ Էդհէմ-փաշան իր շտաբով գիշերն անցկացրեց Վելեստինոում և վերադարձաւ Լարիսա։ Վոլօի բնակիչները զայրացած են յունական իշխանութիւնների վարմունքից, մանաւանդ նրանից, որ յունական զօրքը ճակատագրի կամքին թողեց ազգաբնակութիւնը, և ոչինչ միջոցներ ձեռք չառաւ՝ ապահովելու քաղաքացիների կեանքը և սեփականութիւնը։

ԱՐՏԱ, 29 ապրիլի։ Քաղաքը լցված է փախստականներով։ Երեսցին տիֆ և փորձարիք հիւանդութիւնները։ Երկիւղ են կրում ծանր էպիդէմիայից։

ԱԹԷՆՔ, 30 ապրիլի։ Լուրերին նայելով, Թիւրքաց առաջաւոր պահնակները երեսցին Դոմոկոսին հարեան բլուրների վրա։ 2,000 յոյներ ուղարկվեցին Նէգրոս լճի մօտ, Դոմոկոսից հարաւ, անցքը պաշտպանելու համար։ Գլխաւոր շտաբը ջանք է գործ դնում, որ թոյլ չը տայ չրջապատել Դոմոկոսը։

Կ. ՊՕԼԻՍ, 30 ապրիլի։ Ապրիլի 28-ին Ֆարսալից մեկնեցին Թիւրքաց երկու զօրաբաժիններ, մէկը դէպի Դոմոկոս, միւսը՝ Ալմիրոս։

Ներկայ պատերազմի առիթով՝ սուլթանը՝ հաստատեց ոսկի և արծաթի մեդալներ՝ զօրաբաժիններում ծառայողների համար։

ԱԹԷՆՔ, 30 ապրիլի։ Հասարակաց կարծիքը, խնայարհված ճակատագրի առաջ՝ ընդունում է Կրետէից զօրքի յետ կանչելը։ Գերմանական դեսպանը հրահանգ ստացաւ, և սպասվում է որ առաւօտը յայտագիրը կը յանձնվի։

ԱԹԷՆՔ, 30 ապրիլի։ Ապրիլի 28 ից պետութիւնները պաշտօնապէս առաջարկեցին իրանց միջամտութիւնը, որը Յունաստանը անմիջապէս ընդունեց։

ԼՕՆԴՕՆ, 30 ապրիլի։ Համայնքների ժողովում։ Բալֆուր յայտնեց, որ բոլոր պետութիւնների ներկայացուցիչները Աթէնքում՝ հրահանգներ ստացան և առաջարկեցին պետութիւնների միջամտութիւնը, որը Յունաստանն ընդունեց։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ապրիլի 28-ին։ Ապրիլի 27-ին, Թագաժառանգ Յէսարեվիչի ծննդեան օրը, մայրաքաղաքը զարդարված էր դրօշակներով։ Բոլոր եկեղեցիներում, պատարագից յետոյ, մաղթանքներ կատարվեցին։

Ապրիլի 27-ին, Թագաժառանգ Յէսարեվիչի ծննդեան օրը դաչինեան պալատի եկեղեցում պատարագ մատուցվեց։ Մաղթանքին ներկայ էին՝ Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Մարիա Թէոդորովնա և ուրիշ բարձրագոյն անձինք։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ
Ապրիլի 29-ին

Լօնդօնի վրա	10 ֆունտ արժէ. .	93	ր.	95 կ.
Բերլինի վրա	100 մարկ — . .	45	»	90 »
Պարիզի վրա	100 ֆրանկ — . .	37	»	35 »
Ոսկի	— — արժէ . .	—	»	— »
Մաքսային կուպօններ	— . .	149	»	— »
Բօրսային դիսկոնտ	— . .	$5^1/_2$	—	$7^0/_0$ »
$4^0/_0$ պետական ըէնտա		99	»	— »
Ներքին $5^0/_0$ առաջին փոխառութ.		288	»	— »
— — երկրորդ —		$249^1/_2$	»	— »
$5^0/_0$ գրաւ. Թղթ. ազն. կալ. բանկի		$209^3/_4$		—
$5^0/_0$ պետական երկաթուղ. ըէնտա		—	»	— »
$4^0/_0$ ներքին փոխառութեան . . .		$98^3/_4$		— »
$4^1/_2{}^0/_0$ գրաւ. Թղթ. ազն. կալ. բանկի		$101^1/_8$	»	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ. —			»	—
$4^1/_2{}^0/_0$, վկայակ. գիւղ. հող. բանկի		$101^3/_8$	»	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .		—	»	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օրլիգացիաները.		$101^5/_8$		— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.		$101^1/_4$	»	— »
Օդէսայի — —		100	»	— »
Թիֆլիսի — —		$98^3/_4$	»	— »
Թիֆլիսի կալ. բանկի $6^0/_0$ — . .		101	»	—
$5^0/_0$ — — — . .		$99^3/_8$	»	— »
Քութայիսի — — — . .		101	»	— »
$5^0/_0$ — — — . .		$99^3/_8$	»	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐՄՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼՍԵՑԻ մի գաղթական հայ, որ երկար ժամանակ ծառայել է ՇՈԳԵՇԱՐԺ ԱՂՕՐԻՔՆԵՐՈՒՄ և լաւ գիտէ շոգեմաքենաների մօտ ծառայել և բանեցնել քարերը, միանգամայն հմուտ իր գործի մէջ, պաշտօն է որոնում։ Դիմել՝ Թիֆլիս, Սօլդատսկի բազար, Մալխասի տրակտիր, Մուրադին։
(№ 50) 1—3

ԴԱՍԵՐ

Հայերէնից, ռուսերէնից և առարկաներից՝ միջնակարգ դպրոց մտնել ցանկացող երեխաների համար։ Հասցէ՝ Головинскій проспектъ, табачный магазинъ К. Теръ-Хачатурянца.
(№ 50) 1—3

ԾԱԽՎՈՒՄ Է

Մի ցարկանի տուն մի ցարկանի ֆլիդելով, որ փողոցի վրա է։ Հողի տարածութիւնը այդ տների տակ 205 քառ. սաժէն է։ Տունը գտնվում է Թիֆլիսում, Օլգինսկայա փողոցի վրա, № 31—a։
2—3

Նախկին աւագ ՆՕՏԱՐ Նիկոլայ Սաֆելիևվիչ ՖԷԴՕՐՕՎ, ՈՐ ՆՇԱՆԱԿՎԱԾ Է ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔԻ ՆՕՏԱՐԻ ՊԱՇՏՕՆՈՒՄ, բացեց իր գրասենեակը սոյն ապրիլի 26-ին, Գանօվսկայա փողոցի վրա, կաղարօվների տանը, № 3, ուր գտնվում էր նոտար Ա. Գ. ՄԱՄԻԿՕՆՕՎԻ գրասենեակը, 2—3

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և ներքին հիւանդութիւններ։

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխայոց հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. կանանց հ. չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, իսկ $1^1/_2$—2 ժ. երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի։

Ի. Ֆ ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ։

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—$6^1/_2$—$7^1/_2$ ժ.

Հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ են անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզօն, Սամսօն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 14/26 մայիսի, ԱՐՄԷՆԻ չոգենաւը, նաւապետ ԲՈՒԼ և այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ։ Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից

Պակաս գներով։ Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Ալբօնի, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ա. Դիլդարեանին, Կոլիբեանկինսկայա հրապարակ։ ՆՕՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիօր Հերչինրոդերին։ (№ 16) 12—20

ԿԱՅԵՐԸՐԸ ԿՐԱԿԻՑ ՓՈԽԱԴԱՐԶ ԱՊԱՀՈՎԱԳՈՐԾ, ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ-յայտնում է ընկերութեան պ.պ. անդամներին, որ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ներկայ տարվայ ապրիլի 15-ին չը կայացած ժողովի տեղ, Ընկերութեան կանոնադրութեան §§ 27-ի հիման վրա՝

Նշանակված է մայիսի 4-ին, կիրակի, առաւօտեան $10^1/_2$ ժամին, քաղաքային Դումայի դահլիճում։
(№ 48—չ. և հ.) 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ 1897 թուի մայիսի 18-ին կը կայանայ Թիֆլիսի քաղաքային դումայի 1897—1901 քառամեայ չրջանի ձայնաւորների ընտրութիւնը։ Ժողովի տեղի և ժամի մասին առանձնապէս կը յայտարարէ քաղաքագլխի պ. պաշտօնակատարը։ Ապրիլի 18-ից մինչև մայիսի 2-ը քաղաքային ուղղավայի տան մէջ զբաղմունք եղած օրերում և ժամերում, ընտրողներից ընդունվում են ձայնաւորների համար նրանց առաջարկած կանդիդատների ցուցակները։ Մի և նոյն ժամանակ ընտրողներին տոմսակներ է տրվում ներկայ լինելու մայիսի 18-ի ժողովին՝ և գաղտնի քուէարկութեամբ ձայնաւորներ ընտրելու։ Այդ նոյն ժամանակամիջոցի ընթացքում քաղաքագլխի պ. պաշտօնակատարի անունով ընդունվում են այն անձանց գրաւոր յայտարարութիւնները, որոնք կը ցանկանան իրանք իրանց ձայնաւոր առաջարկել։ Ընտրողներից ցանկացողները կարող են Քաղաքային վարչութեան դիւանից ստանալ 1892 թուականի օրէնսդրութեան 24—33 յօդուածներից քաղուածներ, կանոններ և հրահանգներ ընտրութիւնների վերաբերմամբ, և բլանկներ ձայնաւորների համար առաջարկված անունները գրելու համար։ Ամեն մի ընտրողի առաջարկած կանդիդատների թիւը 96-ից աւելի չը պիտի լինի։ Իսկ եթէ պատահի որ մէկն ու մէկը որոշեալ թիւից աւելի կը լինի առաջարկած, այն ժամանակ հաշուելիս ի նկատի կառնվեն միայն առաջին 96-ը։ Կանդիդատների ցուցակների ընդունելութիւնը կատարվի մայիսի 2-ին, ցերեկվան ժամը 3-ին, որից յետոյ կնքված արկղը կը բացվի Քաղաքային Ուղղավայի ներկայութեամբ և վերջինս կը սկսի կազմել ձայնաւոր լինելու համար առաջարկված բոլոր կանդիդատների ընդհանուր ցուցակը, որոշելով իւրաքանչիւր կանդիդատի ստացած ձայների թիւը։ Հինգ ընտրողներից աւելի պակաս հոգով առաջարկված անձինքները չեն մտցնվի կանդիդատների ցուցակի մէջ, բացի նրանցից, որոնք իրանք իրանց կառաջարկեն։

Հաւատարմագրեր կարող են տրվել այնպիսի անձանց, որոնց մասին ցոյց է տրված քաղաքային օրէնսդրութեան 24-րդ յօդուածի 2 ծանօթութեան և 25—27-րդ յօդուածների մէջ, 1) այն անձինքների կողմից, որոնք ընտրութեան մասնակցելու իրաւունք ունեն և չեն գտնվում խնամակալութեան տակ, թէև չեն հասած 25 տարեկան հասակի, 2) իգական սեռին պատկանողները, 3) հայրերը իրանց անբաժան որդիներին։ Իսկ 1892 թուականի քաղաքային կանոնադրութեամբ սահմանված չէ բացակայ ընտրողի ձայնի իրաւունքը մի ուրիշին տալ, ուստի և այդպիսի հաւատարմագրեր տրվել չեն կարող։
(№ 47) 3—3

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Апрѣля 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. № 8.